Սուսաննա Առաքելյան

ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՐԴԵԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր. Որդեգիր, Մարդասիրական ընկերություն, Դավիթ Ռոստոմյան, Բաքու, Ներսիսյան դպրոց, Սարգիս Կուկունյան, Ներսես Աբելյան, Գևորգ Ղարաջյան, դրամական նպաստներ, երեխաների կրթություն, խնդրագիր, առաջադիմություն:

XIX դարի սկզբին, հաջողություններ արձանագրելով առևտրի և ծովագնացության ոլորտում, Բաքու քաղաքը նույն դարի կեսերից դարձավ խոշոր արդյունաբերական կենտրոն: Տեղի հայերն աչքի էին ընկնում ձեռներեցությամբ և բանիմացությամբ, ժամանակի ընթացքում՝ նաև կրթվածությամբ: Նրանք ընդգրկված էին հասարակական-քաղաքական, տնտեսական և այլ ոլորտներում, ոչ սակավ դեպքերում՝ զբաղեցնում բարձր պաշտոններ: Այդ ամենը նախապայման հանդիսացավ Մարդասիրական ընկերության ստեղծման համար, որն, ի սկզբանե, լուսավորական հիմնարկություն էր:

Չմանրամասնելով այդ ընկերության գործունեության հիմնական ուղղությունները, որին արդեն անդրադարձել ենք[1], նշենք, որ այն առանձնակի ուշադրություն է դարձրել կրթական գործունեությանը, այդ թվում՝ հայկական քաղաքային և գյուղական դպրոցների պահպանմանը: Առաջին տարիներին, երբ ընկերությունը չուներ բավարար միջոցներ, նրա ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել էր Բաքու քաղաքի դպրոցների վրա: Մասնավորապես, ընկերության ուշադրության կենտրոնում են գտնվել Բաքվի երկսեռ դպրոցները: Նրա գործունեության մեջ առանցքային տեղ են զբաղեցրել նաև անապահով ընտանիքների երեխաների կրթության ու դաստիարակության, նման ընտանիքներին դրամական նպաստներով աջակցելու, հիվանդներին անվճար բժշկությամբ ապահովելու հարցերը:

Ի սկզբանե ընկերության առջև դրված նպատակներից մեկը հասարակական կյանքի տարբեր ոլորտների համար ազգային մտավորական կադրերի պատրաստումն էր, ինչը կարող էր էապես բարելավել կովկասահայերի կարգավիճակը տարածաշրջանում: Ի դեպ, նման գործելաոճ էր որդեգրել նաև մի փոքր ուշ ստեղծված Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը[2]:

1872 թ. «Արարատ» ամսագիրը տեղեկություններ է հաղորդում Մարդասիրականի 4 որդեգիրների[3] մասին, միաժամանակ նշելով, որ ընկերության գլխավոր նպատակը ուսման ծարավ հայ երիտասարդներին նյութապես աջակցելն է[4]: Այս խնդիրը հաջողությամբ լուծելու կարևոր նախապայման էր ոչ միայն Բաքվի, այլև Ռուսական կայսրության տարբեր քաղաքների ազգասեր հայերին՝ որպես պատվավոր կամ տարեկան անդամներ ընկերության կազմի մեջ ներգրրավելը:

Համեմատության համար նշենք, որ նույն հանդեսի 1872 թվականով թվագրվող համարներից մեկում տպագրված հոդվածի վկայությամբ, Նոր Նախիջևանի Հայոց Մարդասիրական Ընկերությունը, որը հիմնադրվել էր 1853 թ. մայիսի 25-ին, այսինքն՝ Բաքվի Հայոց Մարդասիրական ընկերությունից 11 տարի շուտ, այդ պահին ուներ 10 որդեգիր: «...Թոշակաւոր աշակերտաց թիւն էր վերջ տարւոյն 11, - գրում է հոդ-

---

[1] Տե՛ս Առաքելյան Ս., Բաքվի հայոց մարդասիրական ընկերության կանոնադրության շուրջ, «Պատմություն և Մշակույթ» հայագիտական հանդես, Ե., 2017, էջ 185-190:

[2] Տե՛ս Լէօ, Երեսնամեակ Հայոց Բարեգործական Ընկերութեան Կովկասում 1881-1911, Թիֆլիս, 1911, էջ 71:

[3] Ծանո թ. Որդեգիրներն այն երիտասարդներն էին, որոնց մարդասիրական ընկերությունն իր ամբողջ գործունեության ընթացքում խնամքի տակ է պահել: Օգնել է նաև այլ և այլ դպրոցներում սովորող հայ պատանիներին դրամով և գրքերով: Ընկերությունը հատուկ ուշադրություն է դարձրել որդեգիրների վրա, քանի որ հույս ուներ, որ նրանք ուսումը ավարտելուց հետո հասարակության համար պիտանի անդամներ կդառնան (տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 55, թ. 41):

[4] Տե՛ս «Արարատ», տարի Դ, 30 ապրիլի, 1872, էջ 172, տարի Ե, 31 մայիսի, 1873, էջ 212-213:

վածագիրը, - իսկ ձրիավարժից, որ որդեգիրք կըհամարուին Ընկերութեանս-10» [1]: Ուշագրավ է, որ նույն ընկերության 1881 թ. հրատարակած հաշվետվության մեջ որպես ընկերության գործունեության մուտք, հիշատակվում է միայն թոշակ ստացող ընդամենը մեկ աշակերտի մասին, իսկ որդեգրական գործունեության մասին ոչինչ չի ասվում[2]:

Իր գործունեութան հենց սկզբից, Բաքվի մարդասիրական ընկերությունը մշտապես աջակցել է կարիքավոր ընտանիքների երեխաներին: Դրա համար հիմք են հանդիսացել ինչպես սեփական դիտարկումների ընթացքում անապահով ընտանիքների բացահայտումները, այնպես էլ անձնական դիմում խնդրագրերը: Բազմաթիվ դեպքերից որպես օրինակ բերենք ընկերությանն ուղղված Հովհաննես Աբրահամի դիմումը: Նամակում ներկայացնելով իր ընտանիքի սոցիալական ծանր վիճակը և որ որդու անուսում մնալը, խնդրում է վերջինիս հովանավորել Բաքվի գիմնազիայում կամ Ներսիսյան դպրոցում սովորելու համար: Դիմումն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «... Ուստի ես իբրև ծնող ցավելով զաւակիս այժմեան տարաբաղտիկ վիճակի վրա, որ չքաւորութեանս պատճառ է լինում հեռանալ այն ուսումնատեղից և նոր ի նորոյն ուսման ճաշակը առած մանկան նորաբողբոջ հասակը խամրացնելու, որով մեծ կորուստ և զրկանք է լինում ինձ և հոգևորական ազգատոհմիս լուսաւոր անդամոյ պակասաւորութիւնը, որուն համար յատկապես պատրաստվում էր նա որդիս, և գիտելով, որ ազգաշահ ընկերութիանդ ներքին նպատակն է ազգային աղքատորդոց տալ մտաւոր զարգացումն ի պետս ազգի...երեսսանկեալ պաղատանօք խնդրելով ազգային կարեկցութեամբ խղճով իմ որդի չքաւոր դրութեան և յիշիլ թերուսումն Միքայել որդոյս տարաբաղդ վիճակի վերայ ...»[3]:

Բերենք ընկերությանն ուղղված և 1876 թ. հունվարի 28-ով թվագրված մեկ այլ դիմում խնդրագրի օրինակ: Մայրը, ունենալով երեք որդի, որոնցից երկուսը հազիվ էին իրենց օրվա ապրուստը վաստակում, խնդրում էր, որ Մարդասիրականը երրորդ որդուն իր միջոցներով ուսման տա: «Վաղուց արդէն կամենում էի Ողորմած Մարդասիրական Ընկերութիանը պատմել ծանր լուծս թեթևացնելու, - գրված է խնդրագրում, - միայն սպասում էի վիճակիս նորոգվելուն, բայց տարաբախդաբար մնացել է մի և նոյն դրութեան մէջ: ... Ես ինչպես մայր ... աղաչանօք դիմում եմ Ողորմած Մարդասիրական ընկերութեանը, որ գթալով խղճալով ուսման ասպարէզ հանէ իմ Արշակ որդոյս, որով կթեթևացնէ իմ ծանր լուծս: Յուսով եմ, որ Ողորմած Մարդասիրական ընկերութիւնը չի թողնիլ ինձ առանց ուշադրութեան «Մարդասիրական» բառի նշանակութիւնը զգալով»[4]:

Համանման օրինակ էր մեկ այլ՝ սոցիալական ծանր դրության մեջ գտնվող ուսանողի խնդրանքը, որը չստանալով թոշակ և չունենալով նյութական օժանդակության որևէ աղբյուր, գրում է. «Գտնուիլով չափազանց դժուար նիւթական հանգամանքներում, ... Թոյլ տուէք ուրեմն ազնիւ Հայրենակիցներ, դառնալ դէպի ձեզ խոնարհաբար խնդրովս. ես այժմ բժշկական ֆակուլտետի երկրորդ կուրսումն իմ, այնպէս որ այս տարին հաշուելով դեռ 4 տարի պետք է շարունակեմ ուսմանս ընթացքը: Ես համարձակւում եմ խնդրել Մարդասիրական Ընկերութեան խորհրդից բարեհաճել նշանակել ինձ ներկայ տարուայ սեպտեմբերից սկսած թոշակ 200 ռուբլի տարեկան, չորս տարի շարունակ մինչև կուրսս վերջացնելը .... նոյեմբերի 12-ին, 1879 թուին»[5]:

Բազմաթիվ են նաև շնորհակալագրերը, որոնց հեղինակները հավաստիացնում էին, որ ստացել են իրենց հատկացված գումարները և սպասում են շարունակությանը[6]: Նման նամակագիրներից մեկը, լինելով Թիֆլիսի Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտի ուսանող, 1880 թ. մայիսի 12-ին գրած նամակում հավաստում էր, որ Ընկերությունն արդեն ուղարկել է իր առաջին կուրսի ինը ամիսների վարձը և խնդրում էր, որ մնացած երեք ամսվա վարձն էլ փոխանցեն: «Մեծապատիվ Տիարք, - գրում է նա, -

---

[1] Տե՛ս նույն տեղում, տարի Ե, 31 հուլիսի, 1872, էջ 287:
[2] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1343, g. 1, գ. 22, թ. 19-ի շրջ.:
[3] Նույն տեղում, ֆ. 27, g. 1, գ. 5, թ. 15 շրջ., 16:
[4] Նույն տեղում, գ. 16, թ. 28:
[5] Նույն տեղում, գ. 19, թ. 106:
[6] Տե՛ս նույն տեղում, գ. 22, թ. 27, 42, 93:

բաղտ ունինալով հաշուիլու այժմ որդեգիր Մարդասիրական Ընկերութեան վստահանում եմ Ձեզ դիմելու համարձակութիւնն ունենալ, յուսալով, որ չանտէս չպիտի անէիք Ձեր որդեգրի խնդիրը...»[1]: Մեկ այլ նամակում որդեգիր Սարգիս Ծատուրյանցը Մարդասիրականին հայտնում էր իր շնորհակալությունը, որ շնորհիվ նրա ավարտել է Պետերբուրգի համալսարանի ֆիզիկոմաթեմատիկական բաժինը[2]:

Այդօրինակ դիմում-խնդրագրերի թիվը մեծ է, և հնարավոր չէ բոլորը ներկայացնել[3]:

Մարդասիրականի ատենադպիր Ս. Վարշամյանցի կողմից 1874 թ. հրատարակած Ընկերության հաշվետվության համաձայն, որպես ծախսացուցակ նախատեսվել են հետևյալ ծախսերը՝ Օրիորդաց ուսումնարանի ուսուցչուհուն՝ տարեկան 240 ռ., նույն դպրոցում Խորեն քահանայի աշխատավարձը՝ որպես հայոց լեզվի, օրենքի և վայելչագրության ուսուցիչ՝ 200 ռ., պահակին՝ 60 ռ., վառելափայտի համար՝ 50 ռ., չորս որդեգիրներին՝ 400 ռ., խորհրդի ժողովների գրագրին և գործավարին՝ 100 ռ., գործավարության համար նախատեսված մանր ծախսերի՝ 50 ռ. և վերանորոգման ծախսերի համար՝ 100 ռ.: Ընդամենը՝ 1200 ռուբլի[4]:

Նույն աղբյուրում, ընկերության 1873 թ. ընթացիկ ծախսերի մեջ, որպես որդեգիրներ հիշատակվում են՝ Միքայել Տեր-Հովհաննիսյանը, որը սովորում էր Պետերբուրգի կայսերական բժշկավիրաբուժական ակադեմիայում՝ ստանալով 150 ռ., Հայկուհի Տատյանա /Դատիանա/ Միլանսկին՝ Սանկտ Պետերբուրգի կայսերական մանկաբարձության ճեմարանում՝ 180 ռ., շամախեցի Ներսես Աբելյանը՝ Բաքվի գիմնազիայում՝ 100 ռ., Աղդամ գյուղի բնակիչ Սարգիս Միրզայան Մեհրաբյանը՝ Մոսկվայի տեխնոլոգիական ուսումնարանում՝ 75 ռուբլի: Բացի այդ, Բաքվի գիմնազիայի աղքատ ուսանողներին հատկացվել է 103 ռ., 96 կ., Ծխական ուսումնարանի աղքատ աշակերտների և օրիորդաց ուսումնարանի աշակերտուհիների դասագրքերի համար՝ 22 ռ., 5 կ., փոստի և հեռագրի համար՝ 15 ռ., 36 կ., ընկերությանը պատկանող շինությունների մանր վերանորոգումների համար՝ 3 ռ., 35 կ.[5]:

Մարդասիրականի նախկին որդեգիրներից Ա. Գալստյանը տպագրում է մի հոդված, որում քննադատում է Ընկերության գործունեությունը և գտնում, որ ավելի խելամիտ կլինի, որ վերջինս իր միջոցներն օգտագործի Ռուսաստանում և արտասահմանում ուսանողներ պահելու համար, քան ծախսի օրիորդաց դպրոցների վրա: «...Ընկերութիւնը պիտի աշխատի իւր գումարները կանօնաւորապէս գործ դնէ, պիտի նրա հարստութիւնը կայանայ որդեգիրներ պահելում, - գրում է նա, - ուրեմն եթէ ընկերութիւնը կամենում է մտածել իւր ապագայ սերնդոց բարօրութեան վերա, պարտական է առանց խնայելու իւր գումարները գործադրել նոցա կրթութեան և լուսաւորութեան վերա, ունենալով ապագայում բարեկիրթ և հասկացող սերունդ»[6]:

Հավանաբար նույն հեղինակը, այս անգամ անանուն, թերթի հաջորդ համարներից մեկում, փնովում է Ընկերության գործունեությունը, շեշտում, որ վերջինս, դժգոհ մնալով որդեգիրների վերաբերյալ իր հարցումներից, քանի որ չի ստացել ակնկալվող արդյունքը, որոշել է « ...բացի մի քանի որդեգիրներ պահելուց ըստ առաջնոյն, կեդրոնացնել իւր գործունեութիւնը բոլորովին անկիրթ և անուսում գիւղացիների մէջ և այդտեղ մսխել օգտով նոյն տարեկան ծախսը: Նպատակը պէտք է լինի-հաստատել գիւղերում ուսումնարաններ, օգնել նիւթապէս և մտաւորապէս և զուգընթաց ընդելացնել ժողովրդին-

---

[1] Նույն տեղում, թ. 49, 50:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 35, թ. 7:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 16, թ. 52, 53, 91 և շրջ., 151 և շրջ., գ. 17, թ. 71, գ. 19, թ. 5 և շրջ., 27, 99, գ. 22, թ. 132 և շրջ., 133, 201 և շրջ., 202 և շրջ., գ. 35, թ. 150, 155:

[4] Տե՛ս ՏԱՐԵՀԱՆԴԷՍ ԿԱՄ ՀԱՇԻՒ Յորինեաց Բագուայ Հայոց Մարդասիրական Ընկերութեան Անդամ և Ատենադպիր Սերգեյ Ս. Մ. Վարշամեանց. վասն, 1873 ամի, Բագու, 1874, էջ 6-7:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 17-18:

[6] «Մշակ», 5 դեկտեմբերի, 1874, N 49:

նիւթական զոհերին և ծախսերին նոր սերնդի համար: ...Քաղաքներում նրա գործունէութիւնը կը կայանայ որդեգիրներ պահելում ...»[1]:

Ա. Գալստյանի քննադատությանն ի պատասխան, Մարդասիրականի ատենադպիր Ս. Վարշամյանցը խորհրդի անդամների հանձնարարությամբ, «Մշակ»-ում հանդես է գալիս հերքումով, փաստելով, որ ընկերության անդամները երբևէ չեն դժգոհել և միայն շնորհակալ են եղել ներդրված գումարները ճիշտ նպատակով օգտագործելու համար: « ...Եթէ պ. Գալստեան միջոց չէ ունեցել կարդալ ընկերութեան կանոնադրութիւնը, - գրում է նա, - չէ կարողացել տեսնել և լսել թէ ընկերութեան անդամք ինչով են պարապել և թէ ընկերութիւնը քանի որդեգիրներ ունէր և այժմ ունի, և կամ քանի քանի որբոց և այրեաց է նպաստաւորում, գոնեա այն ժամանակ, երբ ընկերութեան որդեգիր էր, կարող էր պահանջել և կարդալ խորհրդական անդամոց հաշիւները: ...Նա ըստ զօրութեան 49-դ յօդ, կանօնադրութեան պարտաւոր է խնայողութիւն պահել դրամական գումարները գործ ածելու ժամանակ, և ոչ թէ անկանօն ձևով ցրել ամենը և հասնել այն վիճակին, ինչպէս հասել են շատ ընկերութիւններ»[2]:

Չբավարարվելով Ս. Վարշամյանի պատասխանով, Ա. Գալստյանին պատասխանում է նաև Մ. Հովսեփյանը: Վերջինս Ա. Գալստյանին համարում է հերյուրանքներ տարածող և փաստում, որ Մարդասիրականի տարեկան ծախսերը որոշվում են տարեկան ընդհանուր ժողովներում և յուրաքանչյուր տարվա վերջում նորից քննվում ընդհանուր ժողովի կողմից ու հրատարակվում: Հիմնավորելով Բաքվի հայ հասարակության համար ընկերության ծավալած շինարարական աշխատանքների անհրաժեշտությունն ու արդյունավետությունը, Մ. Հովսեփյանը գրում է. «...հրապարակաւ ստել ներելի չէ...հասարակական մտածողին: Մարդասիրական Ընկերութիւնը թէպէտ չունի այժմ մի որդեգիր Գերմանիայում կամ Շվեյցարիայում, բայց կարող է ունենալ, երբ նորա դրամական միջոցները կը լայնանան: Գոնէ նա ունի Ռուսաստանի բարձր և միջնակարգ ուսումնարաններում որդեգիրներ, որոնց տալիս է ռոճիկ դարձեալ իւր կարողութեան չափ»[3]: Հոդվածն ավարտվում է այն հարցադրումով, որ Մարդասիրականը միշտ պատրաստ է լսել և ընդունել լավ խորհուրդները, եթե, իհարկե, դա իր հնարավորությունների սահմանում է:

Մարդասիրական ընկերությունն իր տասնամյակի առթիվ հրավիրված տարեհանդեսի առաջին իսկ նիստում 1874 թ. փետրվարի 27-ին անդրադառնում է օրիորդաց դպրոցի ծախսերին, ինչպես նաև որդեգիրների համար նախատեսված գումարները այլ նպատակներով չօգտագործելուն[4]:

Ընկերության տրամադրության տակ եղած միջոցների անբավարար լինելու և դրանք նպատակային օգտագործելու հարցադրումներն առարկայական քննության են ենթարկվում նաև Մարդասիրականի 1878 թ. հունվարի 29-ին կայացած տարեկան ժողովում: Արձանագրվում է, որ ընկերությունը չունի բավարար գումար հավուր պատշաճին գործելու համար: Դա բացատրվում է հարուստ դասակարգի ներկայացուցիչների անտարբերությամբ[5]: Բանավեճի ժամանակ ընկերության անդամներից մեկը ստեղծված իրավիճակում կասկածի տակ է դնում նոր որդեգիր ունենալու անհրաժեշտությունը: «Ընկերութիւնը ցրելով իր գումարը մի մասը այստեղ մի մասը այնտեղ,- հայտարարում է նա,- ամենակարևոր և անյետաձգելի գործերը բարձի թողի է անում: Ինչ կը նշանակի նոր որդեգիրներ ունենալ, նոր դպրոցներ բանալ, քանի որ այդ որդեգիրները ուսումը աւարտելից յետ Ընկերութիւնը ճանաչել անգամ չեն ուզում ...»: Նրա կարծիքով Մարդասիրականի գործունեությունը արդյունավետ կլինի, եթե «Ընկերութիւնը իր բոլոր ուշադրութիւնը ... դարձնէ... երկու կարևոր խնդիրների, այն է, օրիորդական դպրոցի և վարժապետներ պատրաստելու հարցի վրա: Գալով որդեգիր-

[1] Նույն տեղում, 19 դեկտեմբերի, N 51:
[2] Նույն տեղում, 23 հունվարի, 1875, N 3:
[3] Նույն տեղում, 29 մայիսի, N 21:
[4] Տե՛ս ՏԱՐԵՀԱՆԴԷՍ ԿԱՄ ՀԱՇԻՒ Յորինեաց Բագուայ Հայոց Մարդասիրական Ընկերութեան Անդամ և Ատենադպիր Սերգեյ Ս. Մ. Վարշամեանց. վասն, 1873 ամի, էջ 5-6:
[5] Տե՛ս «Մշակ», 3 մարտի, 1878, N 32:

ներին նա միայն պէտք է պահէ հիները և այդ այն պատճառով, որ այժմ այլևս չէր կարելի մերժել նոցա և ուսումը թերի թողնել»[1]:

Մինչև 1881 թ. ընկերությունը չէր կարևորում, թե ինչ մասնագիտությամբ մտավորականներ պետք է պատրաստել: Սոսկ կարևորում էր, որ նյութական միջոցներն անիմաստ չվատնվեն այն անձանց վրա, ովքեր վստահություն չէին ներշնչում: 1881 թ. Մարդասիրականն իր առջև խնդիր է դնում օգնել տարրական դպրոցներին և գյուղական ուսումնարաններին: Այլևս չէր խրախուսվում միջնակարգ և բարձրագույն դպրոցներում որդեգիրներ պահելը, ինչը, սակայն, իրականում չնվազեցրեց վերջինների մուտքը համապատասխան դպրոց: Պատճառը ուսուցիչների սակավաթիվ լինելն էր, որը հարցականի տակ էր դնում հայկական դպրոցի լինել չլինելու հարցը: Մարդասիրական ընկերությունը պահանջում էր, որ իր որդեգիրները սովորեն մանկավարժություն և ավարտելուց հետո աշխատեն դպրոցներում: «Ընկերութիւնը պիտի աշխատէ խնդրատուների մէջ ընտրել, գերադասել նրանց, որոնք կ'կամենան ուսանիլ ուսուցչական դպրոցներում,- ասված էր ընկերության 25-ամյա գործունեության մասին Ա. Գալստյանի աշխատությունում: Ընդունած որդեգիրներից նրանք, որոնք ուսանում են մասնագիտական բարձրագոյն դպրոցներում, բարոյապէս պարտաւորւում են Ընկերութիւնից ստացած օժանդակութիւնը մասնաւոր գումարներով վերադարձնել, իսկ նրանք, որոնք կ'ուսանին մանկավարժական դպրոցներում, պարտաւորւում են ազգային դպրոցներում ծառայել ռոճիկով այնքան տարի, որքան տարի օժանդակութիւն է ստացած»[2]:

Նշված մոտեցումն ընդունելի էր խնդրատուների մի մասի համար: Արխիվային վավերագրերում առկա են նման բովանդակությամբ դիմում խնդրագրեր: «Ունինալով ցանկութիւն վարիլ ուսուցչական պաշտոն ազգային հոգևոր դպրոցներում, - գրված էր դրանցից մեկում,- խնդրում եմ… խոնարհաբար օգնիլ ինձ դրամով շարունակել ուսումս մի որևիցէ ինստիտուտում, որոյ ուսման ընթացքը աւարտելուց յետոյ խոստանում իմ կատարել Ձեր բոլոր առաջարկած պայմաններն ու ուսուցչի պաշտոն վարելն Հայկական ուսումնարաններում ...»[3]:

Բայց այս գործելաոճը նույնպես արդյունք չի տալիս, քանի որ ոչ բոլոր որդեգիրներն էին ցանկանում սովորել մանկավարժություն: Նրանցից շատերը գերադասում էին այլ մասնագիտություններ ուսանել, իսկ որպես փոխհատուցում, խոստանում էին հետագայում մաս մաս վերադարձնել իրենց հատկացված օգնությունը:

Որդեգիրներին մանկավարժական կրթություն պարտադրելու վերը նշված երևույթը ժամանակին քննադատության է արժանացել նաև Հակոբ Մելիք-Հակոբյանի (Ռաֆֆի) կողմից, որը նշում էր, թե ժողովրդի առաջադիմությունը պետք չէ միայն դպրոցների մեջ տեսնել, այն պետք է տարաբնույթ լինի՝ կարևորելով և՛ երաժիշտների, և՛ նկարիչների, և՛ այլոց տաղանդները: Բարեգործները պետք է այդ ոլորտներում ևս աջակցություն ցուցաբերեն: «Այժմ թե մեր բարեգործական հիմնարկությունները և թե մասնավոր բարեգործները, բոլորը նպաստում են դպրոցների բարեկարգությանը և ուսումնական անձանց թիվը ավելացնելուն, - գրում է Ռաֆֆին, - մեր կրթության մյուս անհրաժեշտությունները կամ բոլորովին անուշադիր են թողնված, կամ խիստ աննախանձելի դրության մեջ են»[4]:

Այնուամենայնիվ, մանկավարժական կրթության և ուսուցչական կադրեր պատրաստելու խնդիրը շարունակում էր գերիշխել ոչ միայն Բաքվում, այլև ողջ Կովկասում: Այդ հարցը մշտապես գտնվել է հայ բարեգործների հոգածության կենտրոնում: Այդ ուղղությամբ համապատասխան քայլեր է ձեռնարկել նաև Կովկասի բարեգործական ընկերությունը: Ինչպես վկայում է Լեոն, 1885 թ. վերջինիս խորհրդի անդամ Գևորգ Ակիմյանն իր զեկուցման մեջ առաջարկում է աշակերտներին ու ուսանողներին մանր նպաստներ տալու փոխարեն «լիաթոշակ աշակերտներ պահուեն Ներսիսեան դպրոցում, և Գէոր-

[1] Նույն տեղում, 4 մարտի, N 33:
[2] ՀԱԱ, ֆ. 27, գ. 55, թ. 23:
[3] Նույն տեղում, գ. 19, թ. 103 և շրջ.:
[4] Ռաֆֆի, Մեր բարեգործական հիմնարկությունները և մեր բարեգործները, Ե., 1991, հ. 11, էջ 483:

գեան ճեմարանում, ինչպէս նաև ուսանողներ բարձրագույն դպրոցներում, այն պայմանով, որ այդ լիաթոշակ սաները պարտաւորուած լինեն ուսուցչութիւն անել հայոց դպրոցներում»[1]:

Մարդասիրական Ընկերության 1886 թ. հրատարակված միամյա հաշվետվության մեջ նշվում էր, որ նախորդ տարում ընկերությունն ունեցել է 8 որդեգիր, որոնցից յուրաքանչյուրին տվել է տարեկան 905 ռուբլի: Այդ որդեգիրներից Ղուբայի գավառի Խաչմազ գյուղացի Բագրատ Յաղուբյանը ուսանել է էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Տիգրան Նավասարդյանը պատմություն և լեզվաբանություն է ուսանել Փարիզի համալսարանում: Շամախեցի Սարգիս Ծատուրյանը ուսանում էր Պետերբուրգի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական բաժնում: Շուշեցի Լևոն Աթաբեգյանը սովորում էր Պետերբուրգի անտառագիտական և գյուղատնտեսական ինստիտուտում: Ազգությամբ ուդին Սարգիս Կուկունյանը 1885 թ. հունիսին մեկնել էր Պետերբուրգ Ուսուցչական ինստիտուտում սովորելու, բայց իրենից անկախ պատճառներով չէր կարողացել դա կատարել: Խորհրդին գրած նամակով նա հայտնում էր, որ պատրաստվում է ուսուցչական ինստիտուտ ընդունվել երկու տարի հետո: Բացի նշվածներից, որդեգիրների թվում էին Բաքվի ռեալական ուսումնարանի սովորող Ն. Մելիք-Գյուրջինյանը, Մոսկվայի Պետրովսկի ակադեմիայում սովորող Գ. Տեր-Ստեփանյանը և Է. Փիրբուդաղյանի մասնավոր դպրոցում սովորող Կարապետ Մատթևոսյանը[2]:

25 տարվա ընթացքում Մարդասիրական ընկերությունն ունեցել է 20-ից ավելի որդեգիրներ և՛ արտասահմանյան, և՛ ռուսական կրթօջախներում: Այս թվի մեջ չեն մտնում այն որդեգիրները, որոնք սովորել են Բաքվի դպրոցներում:

Բացի վերն արդեն հիշատակված ութ հոգուց Մարդասիրականի որդեգիրների թվում էին.

1. Գաբրիել Ռոմանովսկին (Շամախեցի), ուսել է Բաքվի և Աստրախանի ռեալական ուսումնարաններում, ապա Պետերբուրգի բժշկական Ակադեմիայում և Տեխնոլոգիական ինստիտուտում 8 տարի (1865-1873 թթ.) և ստացել 544 ռ. նպաստ:

2. Ավագ Գրիգորյանը (Նուխեցի), հետագայում Գրիգոր քահանա, ուսել է Բաքվի ռեալական ուսումնարանում 5 տարի (1867-1872 թթ.) և ստացել 384 ռ. նպաստ:

3. Միքայել Տեր-Օհանյանը (Բաքվեցի), ուսել է Պետերբուրգի բժշկական Ակադեմիայում 4 տարի (1872-1876 թթ.) և ստացել 500 ռ. նպաստ:

4. Ներսես Աբելյանը (Շամախեցի), ուսել է Բաքվի ռեալական ուսումնարանում և ապա Մոսկվայի Տեխնիկական ուսումնարանում 12 տարի (1872-1884 թթ.) և ստացել 1825 ռ. 72 կ. նպաստ:

5. Աստվածատուր Գալստյանը (Շամախեցի), ուսել է Բաքվի ռեալական ուսումնարանում 2 տարի (1872-1874 թթ.) և ստացել 110 ռ. 45 կ. նպաստ:

6. Սարգիս Մեհրաբյանը (Շուշի գավառից), ուսել է Մոսկվայի Տեխնիկական ուսումնարանում 8 տարի (1873-1881 թթ.) և ստացել 1115 ռ. նպաստ:

7. Տիկին Նադեժդա Միլանսկին, ուսել է Պետերբուրգի Մանկաբարձական ինստիտուտում 2 տարի (1873-1875 թթ.) և ստացել 220 ռ. նպաստ:

8. Տեր-Մարկոսյանը, ուսել է Բաքվի ռեալական ուսումնարանում 2 տարի (1874-1876 թթ.) և ստացել 132 ռ. 33 կ. նպաստ:

9. Տրդատ Մատինյանը (Գանձակեցի), ուսել է Պետերբուրգի Անտառագիտական ճեմարանում (1874-1875 թթ.) և միանվագ ստացել 120 ռ. նպաստ:

10. Նիկողայոս Փիրումյան (Ղուբեցի), ուսել է Բաքվի ռեալական ուսումնարանում, ապա՝ Օրենբուրգի և Պետերբուրգի ուսուցչական ինստիտուտներում (1876-1877 թթ. և 1878-1881թթ.) ստացել 905 ռ. նպաստ:

---

[1] Լէօ, նշվ. աշխ., էջ 72:

[2] Տե՛ս Տեղեկագիր Միամեայ Գործունէութեան Բագուայ Հայոց Մարդասիրական Ընկերութեան Յանուն Ս. Գրիգորի Լուսաւորիչի վասն 1886 ամի, Բագու, 1887, էջ 29-30:

11. Միքայել Ղալաբեդյան (Շուշեցի), ուսել է Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտում և Պետերբուրգի Անտառագիտական ճեմարանում (1878-1881 թթ.) և ստացել 351 ռ. 40 կ. նպաստ:

12. Զ. Հարությունյանը (Շուշեցի), ուսել է Բաքվի ռեալական ուսումնարանում (1878-1879 թթ.) և ստացել 125 ռ. նպաստ:

13. Ալեքսանդր Զաքարյանը (Շամախեցի,) ուսել է Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտում (1879-1884 թթ.) և ստացել 689 ռ. 50 կ. նպաստ:

14. Գևորգ Ղարաջյան (Գանձակեցի), ուսել է Ժնևի համալսարանի բնապատմական բաժնում (1887-1889 թթ.) և ստացել 350 ռ. նպաստ:

Բացի որդեգիրներից, Բաքվի Մարդասիրականը միջոցներ է տրամադրել նաև Բաքվի ռեալական ուսումնարանում և Բաքվի մասնավոր դպրոցներում սովորող չքավոր ու աղքատ աշակերտների ուսման վարձերը հոգալու համար:

Ընդհանուր առմամբ, վերը նշված ժամանակահատվածում ուսման նպատակով ընկերության կողմից տրամադրված միջոցները կազմել են 14 645 ռ. 30 կ.[1]:

Վերոնշված անձանցից միայն 13-ն են ավարտել իրենց ուսումն, իսկ մնացածները կամ մահացել են, կամ ինքնակամ թողել կրթությունը:

Որդեգիրների ցանկից ակնհայտ է, որ Մարդասիրական ընկերությունն իր գործունեությունը ծավալել է ոչ միայն Բաքու քաղաքում, այլև Շամախիում, Թիֆլիսում, Գանձակում, Երևանի գավառում, Շուշիում և այլուր:

1889-1894 թթ. ընկերությունն առավելապես փորձում էր օժանդակել տարրական դպրոցներին: Բայց իշխանությունների կողմից 1896 թ. հայկական դպրոցների փակումից հետո այն վերադառնում է որդեգրության գործին՝ ծախսելով խոշոր գումարներ: Շուրջ վեց տարի՝ 1894-1899 թթ., ընկերությունը չէր միջամտում որդեգիրների ընտրած մասնագիտություններին և հարցերը լուծում էր այնքանով, որքանով թույլ էին տալիս իր նյութական հնարավորությունները:

Որդեգրական գործունեության վրա ազդեցություն թողեց 1895 թ. կառավարության կողմից Մարդասիրականի կանոնադրության կետերից մեկի փոփոխությունը: Եթե նախկինում լոկ կարևորվում էր անձի ռուսահպատակ լինելը, ապա այսուհետ ընկերությունը չէր կարող որդեգիրներ պահել արտասահմանյան կրթօջախներում: Նրա գործունեությունը սահմանափակվում էր միայն Ռուսաստանի տարածքով[2]**:**

Որքան էլ Ընկերությունը հետևողական էր որդեգիրներին ուղարկած գումարների հարցում, լինում էին դեպքեր, որ գումարը ժամանակին տեղ չէր հասնում: Բերենք մեր ձեռքի տակ եղած նման դեպքերից մեկի վերաբերյալ շնորհակալական բովանդակությամբ նամակից մի հատված. «Այսօր նոյեմբերի 14 ստացայ Ձեր ուղարկած նամակը, - 1897 թ. գրում է ուսանող Գագիկ Պռոշյանը, - որի համար ես շատ և շատ շնորհակալ եմ Ձեզ, և որտեղ յայտնում էք ինձ, թէ համաձայն իմ խնդրին Դուք սեպտեմբեր ամսի 28 ուղարկեալ էք 45 ր. Խարկով ուսանող Թոմաս Ասլանեանի անունով, որ նա յանձնի ինձ: Թէպետ ես մինչև այժմ այդ գումարը չեմ ստացել, բայց այնուամենայնիւ թոյլ տուէք ինձ յայտնել Ձեզ իմ խորին շնորհակալութիւնը Ձեր օգնութեան և ուշադրութեան համար...»[3]:

Մարդասիրականի որդեգրական գործունեությունը երկու կարգի էր: Առաջինը աշակերտական ուսումնավճարի հոգալն էր, որի չափը տարբեր կրթօջախներում տարբեր էր: Երկրորդ դեպքում ընկերությունը հոգում էր որդեգիրների թե՛ ուսումնավճարը, թե՛ ապրուստի հետ կապված խնդիրները[4]:

Պատմաբան Դավիթ Անանունը Մարդասիրականին նվիրված առայսօր անտիպ աշխատության մեջ փորձել է ի մի բերել վերը նշված երկու ուղղություններով ընկերության ծավալած գործունեությունը: Նրա տվյալներով Բաքվի տարբեր ուսումնական հաս-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, գ. 55, թ. 23-24:

[2] Տե՛ս Հայաստանի պատմության թանգարան (այսուհետ՝ ՀՊԹ), Նոր և նորագույն պատմության բաժնի ֆոնդ, բմ 840, մմ 10884, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն հայոց. 1864-1913 թթ., էջ 51:

[3] Տե՛ ս ՀԱԱ, ֆ. 27, g. 1, գ. 44, թ. 12:

[4] Տե՛ս ՀՊԹ, Նոր և նորագույն պատմության բաժնի ֆոնդ, բմ 840, մմ 10884, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն հայոց 1864-1913 թթ., էջ 51:

տատիություններում սովորող որդեգիրները ստացել են հետևյալ ուսումնավճարները. Բաքվի ռեալական դպրոց՝ 2868 ռուբլի, Բաքվի մասնավոր դպրոցներ՝ 360 ռուբլի, Բաքվի գիմնազիա՝ 1820 ռուբլի, Բաքվի տեխնիկական դպրոց՝ 600 ռուբլի, ծովագնացների դպրոց՝ 120 ռուբլի, քաղաքային դպրոց՝ 150 ռուբլի: Ընդհանուր առմամբ Բաքվի տարբեր կրթօջախներում սովորողներին որպես ուսումնավճար հատկացվել է 5918 ռուբլի: Ակնհայտ է, որ այդ գումարի մեծագույն մասը հատկացվել է Բաքվի ռեալական դպրոցի և գիմնազիայի սովորողներին:

Բաքվի կրթօջախներից բացի ընկերությունը ուսումնավճարներ է հատկացրել նաև Այսրկովկասի այլ կրթօջախներում սովորողներին. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի աշակերտներին՝ 300 ռուբլի, Թիֆլիսի գիմնազիայի մեկ աշակերտի՝ 90 ռուբլի, Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտի մեկ սովորողի՝ 60 ռուբլի, Շուշիի թեմական դպրոցի աշակերտներին՝ 66 ռուբլի:

Մարդասիրականը ուսումնավճարներ է հատկացրել նաև Մոսկվայում (450 ռուբլի) և Խարկովում (150 ռուբլի) սովորող հայ ուսանողներին և միանվագ նպաստ (732 ռուբլի) Մոսկվայի, Պետերբուրգի, Կիևի և այլ վայրերի ուսանողներին:

Ընդհանուր առմամբ, որպես ուսումնավճար, Մարդասիրականը տրամադրել է 7766 ռուբլի[1]:

Երկրորդ կարգի 43 որդեգիրների համար, որոնց դեպքում Մարդասիրական ընկերությունը հոգացել է թե՛ ուսումնավճարի, թե՛ ապրուստի ծախսերը, ընդհանուր առմամբ հատկացվել է 25102 ռուբլի: Այդ գումարի մի մասով հոգացվել են Բաքվի ռեալական դպրոցի 4, գիմնազիայի՝ 1, արհեստագիտական դպրոցի՝ 1, տեխնիկական դպրոցի՝ 1, Շամախիի քաղաքային դպրոցի՝ 1, Թիֆլիսի ռեալական դպրոցի՝ 1, այգեգործական դպրոցի՝ 1, մանկաբարձական կուրսերի՝ 1, ուսուցչական ինստիտուտի՝ 2, Ներսիսյան դպրոցի՝ 1, Շուշիի ռեալական դպրոցի՝ 2, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի՝ 2 սովորողների ծախսերը՝ ընդհանուր գումարը՝ 8862 ռուբլի:

Մնացած գումարներով հոգացվել են Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտում՝ 1, բժշկական ճեմարանում՝1, մանկաբարձական ինստիտուտում՝ 1, համալսարանում՝ 3, Անտառագիտական ինստիտուտում՝ 3, Ուսուցչական ինստիտուտում՝ 1, Մոսկվայի Տեխնիկական ուսումնարանում՝ 1, համալսարանում՝ 6, Խարկովի Տեխնոլոգիական ինստիտուտում՝ 2, Փարիզի համալսարանում՝ 1, Ժնևի համալսարանում՝ 1 սովորող ուսանողների ծախսերը՝ ընդհանուր գումարը՝ 16240 ռուբլի:

Բացի այդ, Մարդասիրականն իր տնօրինած գումարներից Գևորգյան ճեմարանին է հատկացրել 5100 ռուբլի:

Այսպիսով, իսկական որդեգիրների համար (և՛ ուսումնավճար, և՛ ապրուստի ծախսեր) Բաքվի Մարդասիրական ընկերությունը ծախսել է 30202 ռուբլի[2]:

Հարկ է նշել, որ Բաքվի Մարդասիրական ընկերությունը հոգացել է նշված 43 որդեգիրների մի մասի թե՛ միջնակարգ, թե՛ բարձրագույն կրթության ծախսերը:

Ընկերությունը որդեգիրների համար վճարել է ոչ միայն իր բյուջեից, այլև այդ նպատակով կտակված գումարների տոկոսներից: Թվարկենք դրանցից մի քանիսը: Թադեոս քահանա Բուդաղյանի անունով դրված 2000 ռուբլու տոկոսներով սովորել են Գևորգյան ճեմարանի որդեգիրը: 1890 թ. Հայրապետ Հախումյանի անունով դրված 600 ռուբլու տոկոսները տարեցտարի ուղարկվել են Շուշիի թեմական դպրոցին: 1893 թ. Հովակիմ Ադամյանի անունով դրված 10000 ռուբլու տոկոսներն ուղարկվել են Գևորգյան ճեմարանին: Նույն Հովակիմ Ադամյանի անունով 1893 թ. դրված 4575 ռուբլու տոկոսներով Բաքվի Ռեալական դպրոցն ավարտած մի հայ ուսանել է տեխնիկական բարձր դպրոցներում: 1896 թ. Մարիամ Թումանյանի անունով դրված 3000 ռուբլու տոկոսներով պահվել է մի որդեգիր:

Ընկերության կանոնադրության փոփոխումից հետո հատուկ գումարները դուրս եկան Մարդասիրականի տնօրինությունից: Հ. Ադամյանի 4575 ռուբլին և Մարիամ Թու-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 51:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 52:

մանյանի 3000 ռուբլին հանձնեցին Բաքվի քաղաքային ինքնավարությանը, որպեսզի գործադրվեն համաձայն կտակողների ցանկության, իսկ մնացած գումարներն ըստ պատկանելվույն հանձնվեցին Գևորգյան ճեմարանին և Շուշիի թեմական դպրոցին[1]:

Այսպիսով, Բաքվի Մարդասիրական ընկերությունը որդեգիրների և ուսումնավճարների համար ծախսել է 37.968 ռուբլի: Դրանով հանդերձ, 43 որդեգիրներից քչերն են հայկական միջավայրում էական դեր ունեցել:

Նրանցից Ավագ Գրիգորյանը (հետագայում Գրիգոր քահանա) Բաքվում երկար տարիներ ուսուցչություն է արել Մարդասիրականի դպրոցներում: Նա հրատարակել է մի քանի ժողովրդական երգիչների աշխատություններ, «Սոխակ Հայաստանի» տարածված երգարանը և առաջինն է արծարծել հայոց թատրոնի գաղափարը Բաքվում:

Աչքի ընկնող որդեգիրներից էր Ներսես Աբելյանը, որը երկար տարիներ աշխատել է Մարդասիրականի հաստատություններում: Նա նաև աշխատակցել է «Մշակին» ու «Արձագանքին», ուսումնասիրել և հրատարակել է Այսրկովկասի երկու գավառների գյուղացիության մասին արժեքավոր մենագրություններ և այլն: Ներսես Աբելյանը մասմաս Մարդասիրականին վերադարձրեց այն 1825 ռուբլի գումարը, որը նա ստացել էր որդեգրության ժամանակ: Այս առումով նա միակ բացառությունը կազմող որդեգիրն էր:

Որդեգիրներից Աստուածատուր Գալստյանը երկար տարիներ առանց վարձատրության վարել է Մարդասիրականի անդամ-ատենադպիրի պաշտոնը, եղել է ավագ ուսուցիչ Բաքվի դպրոցում, գրել է ընկերության 25 – ամյակի պատմությունը և այլն...

Ամենանշանավոր որդեգիրներից էր Սարգիս Կուկունյանը, որն անջնջելի հետք է թողել հայ ազատագրական շարժման մեջ:

Որդեգիրներից Տիգրան Նավասարդյանը հայտնի դարձավ որպես բանահավաք, հայկական ժողովրդական հեքիաթների ժողովող:

Որդեգիր Գևորգ Ղարաջյանը աշխատակցել է «Մուրճին» և «Մշակին», ուսուցչություն է արել հայկական թեմական դպրոցներում, հայտնի է իբրև հայ առաջին մարքսիստ և սոցիալ-դեմոկրատ:

Մարդասիրականի մնացած որդեգիրները, որոնք հիմնականում բժիշկներ, փաստաբաններ և ճարտարապետներ էին և այլն, չնչին բացառությամբ առանձնապես ոչնչով չեն արտահայտվել հայ հասարակական կյանքի մեջ, անգամ չեն հետաքրքրվել Մարդասիրականի գործերով[2]:

1897 թ., երբ Բաքվի Մարդասիրական ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ լուծարվում է գրական ֆոնդը, որոշվում է որդեգրել նաև հայ գրողների սովորող երեխաներին: 1897 թ. սկսած Մարդասիրականը որդեգրում է Ղազարոս Աղայանի և Հովհաննես Թումանյանի մեկական որդիներին, և Ալեքսանդր Շիրվանզադեի երկու որդիներին: Ղ. Աղայանի որդուն նշանակվեց 300 ռուբլի ուսման և սննդի վճար, Հ. Թումանյանի որդուն՝ 240 ռուբլի, իսկ Ալ. Շիրվանզադեի որդիներին՝ 400 ռուբլի: 1898 թ. այդ գումարների չափը փոխվեց: Ղ. Աղայանի որդին ստացավ 450 ռուբլի, Հ. Թումանյանինը՝ դարձյալ 240 ռուբլի, իսկ Ալ. Շիրվանզադեի որդիները՝ 450 ռուբլի[3]: Նույն տարում որդեգրվում է նաև Պերճ Պռոշյանի որդին, որի համար վճարվում է 300 ռուբլի:

Մարդասիրականի արխիվային ֆոնդերում պահպանվում են Հ. Թումանյանի շնորհակալագրերը[4], Ալ. Շիրվանզադեի երկու որդիներին թոշակ նշանակելու խնդրագիրը, Վ. Փափազյանի խնդրագրերը և շնորհակալագիրը, Պ. Պռոշյանի խնդրագիրը[5]:

Համեմատության համար նշենք, որ Կովկասի բարեգործական ընկերությունը չուներ նմանատիպ վերաբերմունք մտավորականների երեխաների հարցում, իսկ անհրաժեշտության դեպքում, չնչին գումար էր հատկացնում: Օրինակ, երբ անվանի գրող Ռափայել Պատկանյանը հիվանդանում է և զրկվում ապրուստի միջոցներից, Բարեգործականի խորհուրդն ամսական 5 ռուբլի թոշակ է նշանակում նրա որդիներից մեկին, որը

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 53:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 53, 54:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 57-58:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, g. 1, գ. 63, թ. 15, գ. 65, թ. 1 և շրջ., 2 և շրջ.:
[5] Տե՛ս նույն տեղում, գ. 63, թ. 3 և շրջ., 4, գ. 65, թ. 3 և շրջ., թ. 7, 8 և շրջ., թ. 11 և շրջ., թ. 12, թ. 13:

սովորում էր Թիֆլիսի Արհեստավորաց դպրոցում: Այդ որոշման առիթով Գրիգոր Արծրունին «Մշակ»-ում մի խիստ առաջնորդող է տպագրում, որում հանդիմանում էր Կովկասի բարեգործականի խորհրդին, որ նա այդպիսի չնչին թոշակով անպատվում է հայ ազգի նշանավոր բանաստեղծին: Խորհրդի նախագահ Ա. Անանյանի և Գր. Արծրունու միջև տաք բանավեճ սկսվեց այդ առիթով: Բարեգործականը շուտով ուղղեց թույլ տրված սխալը: 1891 թ. դեկտեմբերի 14-ի նիստում Խորհրդի անդամ Գ. Սունդուկյանը առաջարկում է հաջորդ տարվանից Պատկանյանի որդուն տալ ամսական 15 ռուբլի: Չնայած խորհրդի նախագահ Անանյանն ընդդիմանում է այդ առաջարկությանն, ասելով թե ընկերության առջև հավասար պիտի լինեն բոլոր չքավորները, Գ. Սունդուկյանի առաջարկությունն ընդունվում է»[1]:

Մարդասիրական Ընկերության վաչության գործունեության 1901 թ. տեղեկագրում որդեգիրների մասին հիշատակությունից երևում է, որ այն այդ հարցերով այլևս անմիջականորեն չէր զբաղվում, այլ միայն միջնորդավորված: 1900 թ. հունվարի 9-16-ը կայացած ընդհանուր ժողովի որոշման մեջ որդեգիրներին միջնորդավորված հատկացվել են միայն մեզ արդեն հայտնի հետևյալ գումարները.

«1. 2000 ր. էջմիածնի Սինոդին, որպէս զի դրա տօկոսով պահվեն որդեգրեր հանգուցեալ Թադէոս քահանայ Բուդաղեանի անունով,

2. 600 ր. Շուշվայ հոգևոր դպրանոցին, որպեսզի դրա տօկոսով պահվեն որդեգրեր Հայր. Հախումեանցի անունով»[2]:

Ընկերության հետագա տարիների հաշվետվությունների մեջ որդեգիրների մասին այլևս հիշատակություններ չկան: Որդեգրական գործունեությունը ետ է մղվում՝ իր տեղը զիջելով ոչ պակաս կարևոր գործունեության ոլորտների, որոնք այլ թեմայի նյութ են:

Վերոշարադրյալ նյութը հիմք է տալիս հանգել այն եզրակացության, որ Բաքվի Մարդասիրական Ընկերությունն իր հնարավորությունների սահմաններում արել է ամեն ինչ, որպեսզի աջակցի նյութապես անապահով, բայց ուսման տենչ ունեցող հայ պատանիներին ու երիտասարդներին ստանալու հնարավորինս որակյալ կրթություն: Ընկերության համար հատկապես առաջնահերթ կարևորություն ուներ փակման վտանգի առաջ կանգնած հայկական դպրոցների համար ուսուցչական կադրերի պատրաստման խնդիրը: Քաջալերվում էին մասնավորապես այն որդեգիրները, որոնք ավարտելուց հետո աշխատելու էին որպես ուսուցիչներ: Չնայած, Մարդասիրականի գործունեության այդ ոլորտի վերաբերյալ մամուլում ժամանակ առ ժամանակ տեղ են գտել դժգոհություններ, բայց չպետք է մոռանալ, որ Մարդասիրականի միջոցները, իրոք սուղ էին, իսկ որդեգրական գործունեությունն էլ նրա աշխատանքի միակ բնագավառը չէր:

Сусанна Аракелян, Деятельность Армянского гуманитарного общества в Баку в сфере опекунства. В представленной статье раскрыта деятельность Армянского гуманитарного общества в Баку в сфере опекунства. Общество долгие годы брала на себя учебные расходы армянских бедных юношей и молодых людей стремящихся к учёбе, но лишенных этой возможности. Целью являлась подготовка кадров национальной интеллигенции в различных сферах общественной жизни. В статье обобщены основные результаты разнообразной деятельности общества в этом направлении.

Многие из подопечных общество приобрели популярные имена в различных сферах армянского общества и внесли неоценимый вклад в различные сферы жизни Кавказа.

Ключевые слова: Опека, гуманитарное общества, Давид Ростомян, Баку, школа Нерсисяна, Саргис Кукунян, Нерсес Абелян, Геворк Гараджян, денежные пособия, образование детей, петиция, прогресс.

---

[1] Տե՛ս Լէօ, նշվ. աշխ., էջ 76-77:

[2] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 87, թ. 17-ի շրջ.:

Susanna Arakelyan, **The activities of Armenian Humanitarian Society in Baku in the field of trusteeship.** This article presents the activities of the Armenian Humanitarian Society in Baku in the field of child trusteeship. The Society has been taking care of the tuition costs for the poor Armenian youth and young people who had the desire to learn but could not cover the costs themselves. The goal was to prepare national intellectuals for different spheres of the public life. The article summarizes the main results of the company's various activities in that direction.

Many of the organisation's adoptees became known names of Armenian society and made their unfading contribution to the various fields of Caucasian life.

***Keywords**:* Adopter, Humanitarian Society, David Rostomyan, Nersisyan school, Sargis Kukunyan, Nerses Abelyan, Gevorg Gharajyan, financial benefits, children's education, petition, performance.